


ԱՅ. ԶՈՐՅԱՆ

# ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒՂ


ՅԵՐԱԿՐՈՐԴ  
ՀՐԱՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ

A II  
35306



290/10

Ի  
Բաղադրյալ  
Հա թրջիկ — յիժը  
ՌՃԷԼՈՅ ՀԵՈՒ ՄԻԱԿԱՐԻՆ ԿՐԻՍՏՈՍ ԲԼԲՈՒՆ  
Հաղիվ սկսել էր, ճերմակ ձերունին յերեմաց



Լինում ե, չի լինում մի թագավոր: Այս թագա-  
վորն իր պալատի առաջ ունենում եմի մեծ այգի՝ աստ-  
ծու բարիքով լիքը, այնքան առատ, այնքան հարուստ  
ու դեղեցիկ, վոր աշխարհի ամեն կողմից մարդիկ դա-  
լիս են տեսնելու: Ի՞նչ պատուհներ, ի՞նչ կանաչ, ի՞նչ  
ձաղիկներ, աչքը բարին տեսնի: Ու այգու մեջ ել դան-  
դակի պես մի աղբյուր: Բայց այդ այգու պատուհները  
թագավորը վո՛չ ինքն ե ուտում, վո՛չ ել ուրիշի յե  
տալիս: Յեվ ասն որերից մի որ աղբատի մինը դալիս  
ե այգտեղ վողորմություն ուզելու: Թագավորի այգե-  
պանը, ինչպես ուրիշներին, սրան ել վոչինչ չի տալիս  
և դեռ բարկանում ե ու քշում:

— Կո՛րիր, ասում ե, դու եյիր պակաս թագավորի  
այգուց բան ուզես:


Յետ է դառնում աղբատն եստեղ ու անիծում.

— Թող չորանա ձեր այգին. պտուղ չտա ել յեր-  
բեք, և հավիտյան կարոտ մնաք կանաչ ծառի ու  
պտուղի:

Ասում ե, չի ասում, խոսքի կեսը դեռ բերանում,  
և պահում են այգին վոխվեց — ծառերը տերե-  
ցին և նորը չինել, է ու ձաղիկ խանձվեցին, կանաչ-  
Քանդեցին և նորից—թրը լուրում:

Հա թրը՛ խկ — յոթը տարում նորը կանաչ ու լուր:

Ոճեւուց հետ թագավորը նորից վնաց պոթճի և  
հազիվ սկսել եր, ձերմակ ձերունին յերեվաց նորից:



Մարդիկ յերան ամեն կողմ և մ'ունեալի բցեցին:  
Աղքատը չերեաց: Չիեր հեծան ու սրացան ամեն  
ճամբով:

Բայց աղքատի հետ:

— Ինչ ասէ:

մենքը դան խորհրդի ու միաք անեն թե վոնց անենք,  
վոր մեր աշգին կանաչի:

Ու կանչեցին յերկրի բոլոր գիտուններին և իմաս-  
տուններին բոլոր: Յեկալ հազար ջահել խելոք, յեկալ  
հազար ճերմակ մորուք: Խորհուրդ արին յոթը որ,  
խորհուրդ արին յոթը գիշեր ու առին:

— Թագաւորն ապրամ կենա, պետք և շինել մի  
տաճար՝ հազար սյուն, քառասուն դմբեթ, մի աշնպխի  
տաճար, վորի նմանը չլինի ու աշնակ ազոթել ատա-  
ծուն, վոր նա գթա, աշգուն նորից կանաչ սա:

Հազարն կոչաւ թագաւորն աշ մաքին ու հիմք  
գրեց յեկեղեցուն: Կանչեց յերեք հարյուր հազար բան-  
վոր, վոր քար կտրեն, յերեք հարյուր հազար մարդ,  
վոր քար կրեն, յերեք հարյուր հազար քարտաշ, վոր  
քար սաշեն, յերեք հարյուր հազար վարպետ, վոր  
պատ շարեն: Յեկան բոլորն ու թրը՛խկ հա՛ թրը՛խկ,  
թրը՛խկ հա թրը՛խկ — քար կտրեցին, քար կրեցին,  
քար սաշեցին, պատ շարեցին: Ու յոթը տարում կանդ-  
նեցրին մի տաճար. ի՛նչ տաճար, ինքն ազոթել եր վոր  
կար — հազար սյուն, քառասուն դմբեթ:

Յերբ ամեն ինչ յեղաւ պատրաստ, մեծ հանգեսով,  
յեպիսկիպոստով որհնեցին ու սծեցին, և թագաւորը  
կանգնեց ազոթի: Բայց հազիվ սկսել եր, բաւք բարձ-  
րացաւ տաճարում և մի ալեվոր յերեւոյց նրան:

— Ամեն բան լաւ է, ստաւ, թագաւոր, տաճա-  
րիդ միայն մի բան է պակաս:

Չարմացած թագաւորն ուղեց հարցնել, թե ի՞նչ  
և պակաս, — բայց ծերունին ինչպես յերեւոյցել եր,  
աշնպես էլ աներեւոյթացաւ հանկարծ:

Մյուս որը թագաւորը հրամայեց քանդել յեկեղե-  
ցին և նորը շինել, վոր վոչ մի բան պակաս չլինի:

Քանդեցին և նորից — թրը՛խկ հա թրը՛խկ, թրը՛խկ  
հա թրը՛խկ — յոթը տարում նորը կանգնեցրին:

Ոճեւոյց հետ թագաւորը նորից պնաց ազոթքի և  
հազիվ սկսել եր, ճերմակ ծերունին յերեւոյց նորից:

— Թագաւոր, ասալ, ամեն բան լավ է, տաճարիդ միայն մի բան է պակաս...

Թագաւորն ելի ուղեց հարցնել ինչ, բայց ծերուն ին առաջվա պես չքայցաւ նորից:

Թագաւորը հրամայեց կրկին քանդել տաճարը ու նորը շինել, վոր վոչ մի բան պակաս չլինի:

Կրկին քանդեցին ու յոթը տարում կրկին նորը շինեցին:

Դարձյալ ոճեցին ու Թագաւորը յեկաւ աղոթքի:

Հաղիվ սկսել էր աղոթքը իրա, ճերմակ ծերունին յերեւակաց դարձյալ:

— Թագաւոր, ասալ, տաճարդ կատարյալ է, պայծառ, միայն մի բան է պակաս:

Այս խոսքի վրա Թագաւորը բռնեց նրան ու «ի՞նչն է պակաս, ասա՛», հարցրեց:

— Թագաւոր, ասալ ծերունին, — աղոթքով այգին չի կանաչի. աղոթքի տեղ ուրիշ բան է հարկաւոր:

— Ի՞նչ, ի՞նչ, — հարցրեց Թագաւորն անհամբեր. — ասա տեսնեմ, ո՛վ ծերունի. դրա համար յես չեմ ինայի իմ արքայական դանձն ու վոսկին, միայն թէ իմ այգին առաջվա նման կանաչի նորից:

— Վոչ, Թագաւոր, — ասալ ծերունին. — Նա ձեռք չի բերվի դանձով ու վոսկով և վո՛չ ել արքայական խոսքով... Քո տաճարին և այգուն հարկաւոր է Հաղարան Բլբուլ:

— Իսկ վո՞րանդ է դա, վորտեղի՞ց բերենք այդ Բլբուլը, — հարցրեց Թագաւորն ուրախ:

— Ով Թագաւոր, ասալ ծերունին, հեռու յե նա. պետք է գնալ Չոր-Չորստան, Անդ-Անապատ, ուր քարվան չի ջոշում, վոր հալք չի թոշում, այնտեղ, ուր յերբեք մարդու վտոք չի տեսել. իսկ ճամբեն նրա ծածկիլած և արյուններով, դիակներով, և վոչ մի հողածին դեռ չի հասել այնտեղ...

Ասալ ծերունին ու անհետացաւ նորից:

Թագաւորը մնաց մենակ իր մտքերի հետ: Տխուր-

արտում միտք եր անում, թե վո՞նց բերի Բլբուլը Հա-  
զարան, վոր իր այգին կանաչի նորից: Տխուր-արտում  
միտք եր անում որեր, ամխաներ... Միտք եր անում ու  
հարլում...

2

Այս թագավորն ուներ յերեք տղա՝ Կարին, Չարին  
ու Արին: Յերկու մեծը խելոք էյին ու թագավորի սի-  
բելին, իսկ փոքրը խելքից պակաս եր ու հիմար: Մինչ  
մեծերը նստում վեր էյին կենում իշխանների ու մեծա-  
մեծների հետ, կոխվ էյին գնում ու վորսի, նիզակ էյին  
խաղում ու ջիբիդ, փոքրը՝ Արին գնում նստում եր  
ծառա մարդկանց մոտ ու խաղում նրանց յերեխանց  
հետ: Ու այդ պատճառով պալատում վոչ-վոք չեր սի-  
բում նրան: «Հիմար ե» ասում էյին ու թողնում, վոր  
գնա ծառա մարդկանց մոտ: Ու ամբողջ որը գոմում,  
ախոռում, չեր ել նայում ի՞նչ ե կատարում իրենց  
պալատում: Այն ինչ մեծ յեղբայրները հենց վոր տե-  
սան իրենց հորը արտում, ծունկ չորեցին նրա սուաջ ու  
հարցրին տխուր.

— Ի՞նչ վիշտ ունես, հայրիկ, ասա՛ մեզ, ի՞նչ իղձ ու-  
նես — մենք կատարենք:

— Վիշտս խորն ե, — ասավ թագավորն ու արն-  
քաց, — ե դուք չեք կարող այն բուժել, իսկ իղձս —  
անհասնելի...

— Ասա՛, հայրիկ, ասա՛ ինչ վոր ունես: Ի՞նչ վոր  
ասես մենք կկատարենք, ի՞նչ վոր ուզես մենք կրե-  
րենք...

Վորդիքն այսպես շատ վոր խնդրեցին, թագավորը  
սիրտը բաց արավ ու բոլորը պատմեց, թե այսպես ու  
այսպես վորպեսզի մեր չորացած այգին կանաչի,  
պետք ե բերել Բլբուլը Հազարան:

— Մենք կրեքենք, սաին Սարին, Չարին մխտին:

— Բայց հեռու յե, վարդիք, ու ճամբեն նրա մութ  
ու անհնայա: Պեռք ե գնալ հեռու, հեռու — Չոր-Չորս-  
տան, Անդ-Անապատ, ուր քարվան չի քոչում, ուր  
համբ չի թոչում...

— Մենք կրեքենք, սաին Սարին, Չարին ու վեր  
կացան, գրահ հազան, դենք կապեցին, ձիեր հեծան,  
պաշար առան, ճամբա րնկան:

Այդ ժամանակ Արին խազ եր անում ախոտում:  
Հենց վոր լեց յեղրայրներն ուր են գնում, ինքն ել  
գրահ հազավ, գենքեր կապեց ե ձի նստեց ու մխտայով  
նրանց:

— Վոչինչ, թող գա, սաին յեղրայրները, ճամբին  
մեզ ծառայութլուն կանի:

Ու յերեքով գնացին:

Գնացին, գնացին, որեր, գիշեր գնացին, գնացին  
դեպի հեռու, հեռու — Չոր-Չորստան, Անդ-Անապատ,  
ուր քարվան չի քոչում, ուր համբ չի թոչում:

Գնացին տեսան յերեք ճամբա — մեջտեղը մի ծե-  
րունի նստած:

— Բարի աջողում, պապի, սաին:


— Բարին ձեր արեին, տղերք:

— Մի սոս մեզ, սպալի, ո՞ւր են գնում այս ճամ-  
փաները ջոկ, ու ի՞նչ ճամփաներ են սրանք:

— Այս մեկը, սոսով ծերունին, գնում ե Բաղդադ.  
սրանով հազարը գնում ե, հազարը դալիս. այս մյուսը  
գնում ե Սորասան, սրանով հազարը գնում, մինը  
գալիս. իսկ այս վերջինը... շատ դժար ճամփա յե այս  
վերջինը... Սրանով ո՞վ գնաց, հուր-համբխայան կեր-  
թա՛, կերթա՛, ել չի՛ դառնա...

Յեղրայրներն այտեղ կանգնեցին ու միտք արին,  
թե վոր ճամփով գնան:

— Յեկեք դուք գնացեք Բաղդադ ու Սորասան, ա-  
սում ե Արին, յեա ել կերթամ ես ճամփով, վոր ով  
գնում՝ յեա չի դառնում:



— Լալ, տաին յեղբայրները և ուրախացան. իրենց մաքում, վոր կազատվեն, վերջապես, հիմարից, ու յերեքը միասին պայծամ դրին, թե ո՛վ չուա վերագառնա — աչտակ սպասի մշուսներին:

Ասին, համբուրվեցին ու ճամփա ընկան:

Մեծ յեղբայրը գնաց դեպի Բաղդադ. գնաց ճանապարհի կիսին հանդիպեց մի քյոչկ ու սորայիկանդենց ու մտածեց. «Ձուր, ասալ, ինչո՞ւ դնամ

սարսնվեմ, լալ է մտնեմ այս սարայր ծառայություն  
անեմ, ապրեմ»...

Միջնեկ յեղրայրն ել դնաց դեպի Խորասան: Գնաց,  
դնաց — շատն ու քիչը ճամփան գիտի — դնաց շատ  
փորձանքների մեջ ընկավ, ձին ու չորերը ծախեց կե-  
քավ և, վերջը, չփիւ պես աղյուր, ընկավ Խորասան ու  
դարձավ բաղնիսի ծառա:

Սրանք թող մնան իրենց գործին, մենք յուր տանք  
փոքր յեղրորից:

### 3

Յեղրայրներից բաժանվելով դնաց Արին, գնաց  
դնաց այն տեղերը, ուր չորաստան է, սնասպաս, ուր  
քարվան չի քոչում, ուր հալք չի թռչում: Գնաց հա-  
սավ մի աշխարհ, ուր կարմիր եր ամեն ինչ. ալ կար-  
միր եր հողը, կարմիր եր ծառ ու քար, ալ կարմիր եր  
յերկինքը ու արևը պայծառ... Գնաց, գնաց, շատն ու  
քիչն ինքը գիտի ու իր ձին, գնաց, մին ել տեսավ  
մի սպարանք: Ի՞նչ սպարանք — սմբողջը գմբուխս  
ու լալ, հակինթ, արմատ ու գոհար. փայլիլում է  
արեւի տակ կարմիր փայլով հրեղին. ինքը յերկինք  
է հասնում, բայց վոչ դուռ ունի, վոչ պատուհան:

«Ո՞վ է, տեսնես, ապրում այտեղ», ասավ Արին  
ինքն իրեն, ու նայեց վերեւ, ներքեւ, մարդ-չերեւիաց  
վոչ մի տեղ: Մին ել — ահա՛ մի — փերի... փերի մի  
ասի — մի լուս արեղակ — ձայն է տալիս վերեւից:

— Ո՞վ էս դու, խեղճ տղա. սփռո՞ս քեզ, ջահել  
տղա... Քանի՛ շուտ է հեռացիր, թե չե հիմի կարմիր  
Դեւիլը կերեւիա...

— Ի՞նչ էս վախեցնում, փերի քոյրիկ, աստի  
Արին ներքեւից. — դեռ մի պատիվը շատած, հացիք  
կտորը չկերած, դառը չիրուխը չքաշած, ինձ վա-  
խեցնո՞ւմ էս կարմիր Դեւիլով:

— Դու ինձ լսի՛ր, սոյ աղա, — ասով փերին զարհուրած, — չո՛ւտ հեռացիր այստեղից...

Բայց աղան կանգնել՝ չի շարժվում տեղից:

— Իսկ ո՞վ ես դու, փերի քույրիկ, — ասով Արին ներքեվից. — Ի՞նչ ես անում այս ամբոցում, վոր վոչ դուռ ունի, վոչ սլառուհան. ո՞վ ե քերել, ո՞վ ե փակել քեզ այստեղ:

— Ո՛ր, այ աղա, յես գերին եմ Կարմիր Դեվի, ասով աղջիկը լալով. — նա յեկավ մեր աշխարհն աշխարհեց, ինձ համբաւից մեր տնից ու գերի բերեց: Դե չո՛ւտ, չո՛ւտ հեռացիր դու այս արյունոտ աշխարհից... Տես նրա կերած մարդկանց արյունից կարմրել են հող ու յերկինք, կարմրել են թուփ ու ծառ, կարմրել ե արեւը սլառու:

— Չո՛ւր ե, ասով, փերի քույրիկ: Ով ել կուզի թող դա — յես չեմ գնա: Յես չեմ թողնի քեզ մենակ: Պետք ե փրկեմ քեզ այստեղից:

— Աման, ասով փերին լալով. — մի տալ քեզ մահու բերան. թող յես մնամ այստեղ գերի, միայն դու ջահել կյանքդ փրկի...

Այսպես շատ խնդրեց, ազաչեց փերին, բայց հիմար Արին վոտ չփոխեց:

— Վոր այդպէս ե, ասով փերին, արի պահեմ քեզ ամբոցում, վոր գեվը գա, քեզ չտեսնի:

— Ծնորհակալ եմ, ասով, փերի քույրիկ. յես հենց գեվի համար եմ յեկել. յես կմնամ այստե՛ղ, միայն ասա, թե վոր կողմից ե նա գալու:

Ասով-չասով, մին ել անա հողը շարժվեց դղրդոցով ու սարի գլխին գեվն յերեվաց իր ավարով. ձեռներին բռնել եր նա յերկու գերան, ամեն մինը քառսուն գազ, ու դրանց արանքն արել ամեն տեսակ շունչ ու գազան — վազր ու առյուծ, ինձ ու արջ, գել ու ագլիս, յեղնիկ, յեղջերու, ել ի՛նչ իմանաւ ինչ կենդանի — բոլորն այսպէս կարմեջ արած բերում եր ամբոց: Ու այդ բոլորը կոնջում, ճչում ելին, վոտնում ելին սղեկաւոր ու զարհուր:

Յեկավ դէր ինչպէս վարար մի դեռ, յեկավ ինչպէս ալավ բռնած կարմիր կրակ և գեռ հեռվից, աղին տեսավ թէ չէ, վորոտաց.

— Ո՞վ էս, ասավ, ո՞վ հողածին, վոր համարձակվել էս մտնել իմ հողը, մի՞թէ իմ անունը չէս լսել դու... Հապա չտեսար գյուղ ու քաղաք ամայի. վո՞նց չէս տեսել վոսկորները ձորը լցրած... Բայց լայն է, ասավ, քու վոտով էս յեկել, յերկար ժամանակ մարդու միս չեմ կերել...

— Դեռ մի դրանց ազատի, հետո խոսի, ասավ Արին ու իջավ ձիուց:

Դեվը ծիծաղեց.

— Ո՞վ չնչին մարդ, ասավ, ո՞վ էս դու, վոր համարձակվում էս այդպէս լեզու բանեցնել իմ դեմ. քանի հազար մարդ եմ կերել ու քեզնից էլ կարիճ...

— Ով էլ լինեմ, քո հոգեառն եմ յես, ասավ Արին ու կանգնեց համարձակ:

Մոնչաց դեվը, հուր ու կրակ թողեց բերանից. թողեց բերած դազաններին ու գնաց աղի վրա: Տարամ բերավ իր դերանը քառասուն դադ: Գետինը թնդաց. նրա հարվածից, հողն ու փոշին բարձրացան ամպի նման:

— Ափսո՛ս, ասավ դեվը, բան չմնաց այդ մարդուց, վոր մի համն առնեյի:

— Մեկ էլ արի, ասավ Արին փոշու ամպի միջից:

Դեվը կոտորեց, դեվը փրփրեց, ու գնաց յեկավ այս անգամ հետու տեղից: Յեկավ ու դերանը զարկեց ուժով: Հողն ու փոշին դարձյալ ամպի նման բարձրացան յերկինք:

— Ափսոս, ասավ դեվը, գնաց կոտորվ հողածինը հողի մեջ, մի մաս միս էլ չմնաց, վոր դեռ յի ատամիս տակ:

— Հա՛-հա՛-հա՛, ծիծաղեց Արին նորից փոշու ամպի միջից:

Դեվերը ծիծաղ չեն սիրում:

Այդ ծիծաղից շեղին ավելի կատաղեց, դեմն ավելի փրփրեց: Ու այս անգամ յերկու գերանն ել վրա բերավ: Սար ու ձոր դղրդացին, ու ել ավելի հող ու փոշի բարձրացավ յերկինք:

— Ախո՛ս, ախո՛ս, ասավ դեմք, այնպես զարկեցի, վոր հոտ քաշելու բան չմնաց: Ու մոտեցավ, վոր հոտ քաշի, տեսավ Արին կանդնած առաջին:

— Դե հիմա հերթն խմն ե, ասավ Արին ու նետն արձակեց:

Դեմք վոռնաց ու այս անգամ կրակի տեղ ծուխ արձակեց բերանից և թափալ-թափալ ընկավ գետին չունչը փչեց:

Այստեղ Արին կտրեց դեմքի ախանջները ու տարավ կարմիր ամբոցում փակված աղջկան:

Փերին ուրախացավ ու փաթաթիլեց աղի վրով:

— Դե հիմի, ասավ, դու խմն ես, յես քոնը, արի պատկիկենք:

— Ձե, ասավ Արին, — յես նպատակ ունեմ, պետք ե գնամ: Պետք ե գնամ բերեմ Բլբուլը Հաղարան, վոր մեր չոր այգին կանաչի:

— Վա՛յ, ասավ փերին, — մի՛ գնա, այ տղա. այդ ճամփան շատ դժար ճամփա յե: Արի, ավելի լավ ե, պատկիկենք ու հանգիստ ապրենք մեզ համար:

— Ձե, ասավ Արին, դու խմ մեծ յեղբոր նշանածը կլինես: Յես ուխտ ունեմ, պետք ե կատարեմ:

Ու նշան տվեց, նշան առավ և ճամփա ընկավ գնաց նորից:

Գնաց դեպի հեռո՛ւ, հեռո՛ւ — Չոր-Չորստան, Անդ-Անապատ, ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թռչում...

Գնաց, գնաց, շատն ու քիչն ինքը գիտի ու իր ձին, գնաց ընկավ մի աշխարհ, ուր սեղ եր ամեն ինչ. սեղ եր հողը, սեղ—սեղ եյին ծառ ու քար, սեղ եր յերկինքը ու արեւը չկար:

Գնաց տեսավ մի սեղ ամբոց՝ դուռ—պատուհան դրած—փակած: Հողնած, դադրած իջավ ձիուց ու ամբոցի դուռը թակեց: Մին ել ահա՛ մի աղջիկ — ի՛նչ աղջիկ — վոչ ուտես, վոչ խմես, կանգնես ու նրա յերեսին մտիկ անես... այդ սեղ ամբոցում մի լուռ—արեգնակ... Յեկավ նազուկ քայլերով, դուռը բացեց ու մնաց կանգնած:

— Բարի տեսանք, փերի քույրիկ, ասավ Արին ու գլուխ տվեց:

— Վա՛յ, ասավ աղջիկը տրուր,— ո՞վ ես դու, այ տղա. վոք քամին ե քեղ բերել, ո՞վ ե գրկել քեզ այտակդ... Ծուռ, շուռ հեռացիր, թե չես հիմա Սեղ Դեվը կդա, պատառ—պատառ կանի քեզ...

— Փերի քույրիկ, ասավ Արին, դեռ մի պատիվդ շատած, հացիդ կտորը չկերած, դուռը չերուխղ չքաշած — ինձ փախեցնում ես Սեղ Դեվով:

— Լսիր ինձ, այ տղա, չեմ խնայում քեզ հաց ու պատիվ, բայց քանի դուխղ ուտերիդ ե, հեռացի՛ր այտակից... Գիտեմ, տեսնում եմ հաղթել, անցել ես կարմիր Դեվի յերկրից, բայց սա կարմիր Դեի նման չի: Սա մարդ ե կերել հազար—հազար, աշխարհներ ե ավերել ու մոխիր թողել... Սա յոթը գլուխ ունի, յոթը բերան:

— Վնաս չունի, ասավ Արին, մի որ ծնվել, մի որ պիտի մեռնենք. բայց մի ասա ո՞վ ես դու ե ին՞չ ես անում այս սեղ աշխարհի, սեղ ամբոցում:

— Ախ, այ տղա, յես գերին եմ Սեղ Դեվի, ասավ փերին բալով.— նա ավերեց մեր աշխարհն ու ինձ րեկեց իրեն գերի:

— Լաց մի լինի, փերի քույրիկ, — ասավ Արին աղջկան, — յես չեմ թողնի քեզ հասնող, միայն մի քիչ հաց տուր ուտեմ:

Աղջիկ-փերին շատ զարմացավ տղի վրա, ափսոսաց, բայց քանի վոր սոված էր — խղձաց ու կանչեց վերեւի:

Աղջիկը հաց բերավ, հաց կերան, խոսեցին, մին էլ ահա՛ տունը դողաց հիմքից:

— Այս ի՞նչ բան է, հարցրեց Արին, տունն ինչո՞ւ այսպես դողաց հանկարծ:

— Վայ, ասավ փերին, դեվը գալիս է, այ տղա-արի պահեմ քեզ:

— Ի՞նչ պահես, — ասավ, — գալիս է, թող դա: Յես հենց նրա համար եմ յեկել:

Մի քիչ կացան՝ դեվը յեկավ. յեկավ ինչպես մի սեղ սար: Յոթը գլուխ ունեւր, յոթը բերան: Յեկավ, բերեց անթիվ անասուն ու դադան, բերեց լցրեց գոմերն ու յեկավ վերեւի: Ու հենց վոր տեսավ աղին, մոնչաց յոթը բերնով:

— Ո՞վ ես, ասավ, ո՞վ հողածին: Հավքն իր թեվով, ոճն իր պորտով չի յեկել այստեղ, դու ի՞նչպես համարձակվեցիր... Միթե իմ անունը չե՞ս լսել դու...:

— Լսել եմ, ասավ Արին, ու յեկել եմ քու գեմ կռիվ:

Դեվը ծիծաղեց. — հա՛-հա՛-հա՛:

— Կռիվ, ասավ. — հիմի կուզե՞ս, թե՞ առաջուտ:

— Դու գիտես, ասավ Արին:

Դեվը թե՛ մեր մեջ աղաթ կա, վոր յեկվորին պահեսք, պատվենք, առաջուտը կռվենք:

— Լավ, ասավ Արին, առաջուտը կռվենք:

Ասին, խոսին, հաց կերան միասին ու պառկեցին ջուկ սենյակներում քնելու:

Գիշերովա կիսին դեվը զարթնեց:

— Սա վոր, ասավ, իմ կարմիր յեղբորը հաղթել է, ինձ էլ կարող է վնասել. էլ ինչո՞ւ յեմ առաջուտը

Թողնում. դնամ հենց հիմի ուտեմ վերջացնեմ, յոթը տարի յե մարդու միս չեմ կերել:

Ու վեր կացավ լընգլընգալով զնայ դեպի աղի սենյակը:

Տունը նորից ժած յեկավ:

Տղան զարթնեց:

— Դեվը գալիս ե, ասավ:

Ասավ ու վեր թռավ տեղից: Թուրը հանեց ու կանգնեց պատի տակ:

Դեվը յեկավ ազահ բերնից թուր ու յորձունք թափելով: Յեկավ ու մոնչալով ընկավ քնած հյուրի տեղի վրա, վոր միանգամից կուլ տա նրան: Բայց վրա ընկնելու հետ Արին թուրը տարավ բերեց ու դեվի յոթը գլուխը մի անգամից ցած գլորեց:

Ու ցած գլորեց թե չե՝ լուսը — լուսը բացվի ձեր վրա, — արեվի լուսը բացվեց սեվ աշխարհի վրա: Լուսից զարթնեց աղջիկ-փերին, յեթավ տեղից՝ տեսավ գեվն ել չկա, ընկավ աղի վզով:

— Անհաղթ մնաս, ասավ, կտրիճ աղա: Դե, յես քոնն եմ հիմա, դու իմը, արի սրակվենք:

— Չե, ասավ Արին, դու իմ միջնեկ յեղորը նշանածը կլինես:

Ու նշան տվեց, նշան առավ: Հետո լիջավ ներքև, ինչքան գազան, անասուն ու թռչուն եր բերել դեվը, բոլորին արձակեց — բայց թողեց գոմերից:

— Գնացեք, ասավ, նորից ձեր սարը, ձեր անասուր ու ձեր բները:

Բոլորն ուրախությունից ծուլ յեղան, ճիչ ու կանչ արձակեցին, պտտվեցին աղի գլխով և, ապա ամեն մեկը զնայ ի՛ր սարը, ի՛ր անասուր ու ի՛ր բուներ:

Յերեք որ Արին հյուր մնաց այստեղ, ու յերեք քրից հետո գրահ հագավ, զենքեր առավ, ձին հեծավ ու ասավ աղջկան.

— Դե, մնաս բարով, փերի քույրիկ, յես զնայցի:

— Ուր, հարցրեց աղջիկը վախեցած:

— Գնում եմ, քույրիկ, Հաղարան Բլրուլը բերե-  
լու:

— Վա՛յ, ասավ աղջիկը, մի՛ գնա: նրա ճամփան  
չա՛տ ե դժար, անդառնալի: Հաղարներ են գնացել,  
մինչև այսօր յետ չեն դարձել: Դու ի՛նչ սրտով կամ  
ի՛նչ գեներով ես գնում: Արի, խեղճ գլուխդ մի տար  
մահու:

— Պետք ե գնամ, քույրիկ, ասավ, վճոված րան  
ե: Պետք ե գնամ Հաղարան Բլրուլը բերեմ, վոր մեր  
այգին կանաչի:

Ասավ ու ճամփա ընկավ:

Ու գնաց նորից, գնաց Չոր-Չորստան, Անդ-Անա-  
պատ, ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թռչում...


A II  
35306


Գնաց, գնաց, շատն ու քիչը ճամփան գիտի, գնաց  
ընկավ մի աշխարհ: Ի՛նչ աշխարհ. ամբողջն ավեր, ա-  
վերակ, ամբողջը մարդու վոսկորներով ծածկված:  
Ամեն մի քայլն անելիս, ամեն վոսկոր դարձուրելի ձայն  
եր տալիս.

- Ո՞ւր ես գնում, խենթ աղա:
- Ո՞ւր ես գնում, հիմար տղա:
- Մահն ե կանգնած քո առաջ:
- Դարձի՛ր, դարձի՛ր, փախի՛ր շուտով:

Ու այսպես ահարկու կանչում եյին ամեն կողմից:  
Ձին վախեցած ծառս եր լինում, կոծում եր սանձը յեր-  
կաթե ու դողում բոլոր յերակներով, բայց Արին կանգ  
չեր առնում, յետ չեր նայում:

— Գնա՛, գնա՛, իմ կապույտ, ասում եր նա ձիուն  
ու ասպանդակում:





Ձին նորից առաջ եր վազում, և վոսկորները կան-  
չում եյին ելի.

— Ո՞ւր ես գնում, անխելք տղա:

— Վա՛յ քեզ, ՚խենթ տղա:

— Վերագարծիր, հիմար տղա:

— Քատուն գլխանի Սիպտակ ղեզի հողն և սա:

Ու այսպէս կանչում եյին շարունակ, բայց տղան  
չէր ըսում նրանց, իր Կապույտը քշում եր ու քշում:

Քչեց այսպէս գնաց, ղեմը յելավ ճի սպիտակ

ամբոց: Ի՞նչ ամբոց, ի՞նչ ասպարանք — ամբողջը մար-  
գու սխալտակ վտակորներէց ու գանդերէց շինած:

Գնաց կանգնեց Արին ամբոցի դեմ:

Այստեղ էլ մի աղջիկ յեկավ նրա առաջ — վտակի  
մտղերն արձակ, դեմքը դարնան վարդ, ամեն աչքը տ-  
րեւի հաս:

Յեկավ աղջիկն ու՝

«Վայ քեզ, խեղճ տղա, ասավ, մի՞թե դու այնքան  
վտակորը չտեսար: Գնա յեկած ճամփադ, փախիր շու-  
տով, քանի Սխալտակ դեմը չի գարթնել քնից»:

— Ա՛խ, փերի քույրիկ, ասավ Արին, դեռ մի պա-  
տիվդ չառած, հացիդ կտորը չկերած, դառը չէրուխդ  
չքաշած, ինձ վախեցնում ես Սխալտակ Դեմով:

— Ի՞նչպես չվախենաս, — ասավ, — անահ տղա,  
տե՛ս ամբողջ յերկիրը ծածկվել է նրա կերած մարդ-  
կանց վտակորներով: Տե՛ս, պալատ և շինել մարդկանց  
գանդերից:

— Բայց ինչո՞ւ յե քեզ թողել կենդանի, ասավ Ա-  
րին աղջկան:

— Ո՛ր, այ տղա, յես նրա դերին եմ, ասավ աղջի-  
կը տրտում. — նա ջնջեց, սրբեց մեր յերկիրը, կերավ  
ծնողներին ու քույրերին և ինձ բերեց իրեն դերի...  
Բայց դու գնա, խեղճ տղա, թե չէ, հիմի վտակդ վոր  
ե կղարթնի նա... քառսուն գլուխ ունի, քառսուն  
բերան:

— Ուր գնամ, ասավ Արին, յես հենց նրա համար  
եմ յեկել: Գնա գարթեցրու թող դա կռվեմք:

Այստեղ վտակորները լեզու առան նորից.

— Վա՛յ քեզ, տղա, վա՛յ քու որին, արեւիկն...  
Փախիր քանի շուտ և, փախիր, քանի չի գարթնել...

Շատ կանչեցին այսպես, բայց Արին ելի չչարժիկեց  
տեղից, դեռ մի քիչ էլ առաջ գնաց ու ներս մտավ:  
Գնաց տեսավ քառսուն ունկանի մի կաթնա, քառսուն  
լիդր բրինձ մեջը. փլավ են յեկել, քառսուն հավ էլ  
վրան դրել: Յերեք որ Արին հաց չէր կերել. փլավը

տեսաւ բերանի ջուրը գնաց: Առաւ կերավ ինչքան կարաց, բերանը սրբեց ու մի կողմ նստեց:

Դեմը դարձնեց, յեկավ ներքև:

— Մարդու հոտ եմ առնում, ասավ կնկան, ո՞վ կա այստեղ:

Մինչ վախեցած կինը կպատասխաներ, Արին կողքի սենյակից դուրս յեկավ:

— Յես եմ, — ասավ:

— Ո՞վ ես դու, — դարձացավ դեմը, — հավքն իր թեմով, ո՞՞ն իր պորտով չի դալիս այստեղ, դու ի՞նչ պես համարձակվեցիր...

— Յեկել եմ, ասավ Արին, քու դեմ կռիվ:

Դեմը հասկացավ, վոր դա իր յերկիրը դալուց առաջ սպանել էր իր Կարմիր ու Սեւ յեղրայրներին և հիմա յեկել է իր մոտ:

— Լավ, ասավ, կռիվ կուզես՝ կռիվ անենք: Արի դեռ մի հաց ուտենք, հետո կռվենք:

Նստեցին հացի: Արին կուշտ էր, բան չկերավ, իսկ դեմը քառսուն լիդր բրնձով վլավը առաջը դրեց, ամեն լիդրը մի բերանը կոխեց մի հավի հետ ու վեր կացավ: Վեր կացավ ու ձեռն ասավ իր դուրդը, վոր քառսուն լիդր էր կշռում:

— Դե, գնա՛նք, ասավ:

Արին ել առավ իր թուրը, յեկավ նստեց իր Կապույտին, ու դուրս յեկան հրապարակ:

Նորից դեռնի տակից ու յերեսից դարհուրելի ձայներ:

— Վա՛յ քեզ, խեղճ տղա:

— Վա՛յ քու սրին, արեվին:

Խոսողն ելի վոսկորներն ելին:

— Հերթը հիմի ի՞մն է, թե քունը, ասավ դեմը:

— Քոնն է, ասավ Արին, — յես քո հյուրն եմ:

Դեմը գնաց քառասուն-քառասուն քայլ հեռու:

— Դե, պատրաստ կաց, ասավ, դուրդը յեկավ:

Ու դուրդը գցեց մի ահագին ժայռի նման:

Բլրուլն առած գնաց Արին, գնաց հասավ կնոջ մոտ: Ուրախանար, ինչպէս նրա կինն ուրախացավ: Փաթաթովեց մարդուն, համբուրեց, տխուր սիրտը բաց յեղավ, վոր մարդը վերագարձել էր փորձանքներից ազատ: Նա ե՛լ ավելի ուրախացավ, յերբ տեսավ մարդը հասել է իր նպատակին՝ բերել է Բլրուլը Հագարան:

— Դե, Բլրուլ ջան, ասավ Արին, — մի խոսիր այս չոր սարերը կանաչեն:

Բլրուլը բերանը բաց արավ թե չե Սիպտակ դեմքի չոր, ավերակ աշխարհը կանաչեց ու կանաչների միջից նրա կերած մարդկանց վոսկորները ձայն տվին.

— Որհնյալ լինես, կտրիճ տղա. մենք հանդիստ ենք հիմա:

— Դե, ասավ Արին կնկան, — պատրաստվիր գընանք: Մեր չոր ալդին սպասում է այս Բլրուլին Հազարան:

Յեւ մարդ ու կին վեր կացան, դեմքի թանկագին բաները հալաքեցին, ուղտերին բարձեցին, իրենք ել ձիեր նստեցին ու — զբը՛նդ հա զբը՛նդ, զբը՛նդ հա զբը՛նդ — ճամփա բնկան դեպի Սեւ Դեմի հողը:

Այստեղ ել բլրուլը խոսեց, Սեւ Դեմի ավերակ աշխարհը կանաչեց, իսկ իրենք միջնեկ յեղրոր հարսին վերցրին, դեմքի թանկագին բաները նոր ուղտերի բարձեցին ու նորից — զբը՛նդ հա զբը՛նդ, զբը՛նդ հա զբը՛նդ — գնացին հասան կարմիր Դեմի հողը:

Այստեղ ել վերցրին մեծ յեղրոր հարսին, վերցրին դեմքի թանկագին բաները և նորից ճամփա բնկան:

Գնացին, գնացին հասան այն տեղը, ուր յեղրայրները բաժանվել էին իրարից:

Յերեք համփի մեջտեղը նստած էր ելի առաջվա ծերունին:

— Բարի աջողում, պապի, ասավ Արին:

— Բարով, հագար բարի, կտրիճ տղա, — ճանաչեց ծերունին նրան:

— Պատիւ, յեղբայրներս չե՞ն անցել այս կողմից, —  
հարցրեց Արին:

— Ձե, ասալ ծերունին, — այստեղից դեռ մարդ  
չի անցել:

— Դե վոր այդպես ե, ասալ Արին, այս հարսներին  
մտիկ արա, յես դնամ յեղբայրներիս յեակից:

— Շատ լալ, ասալ ծերունին, իմ գործն ե մտիկ  
անել...

Յեւ Արին մնաս բարով արալ բոլորին ու ճամփա  
ընկալ:

Գնաց, շատ քաղաքներ ման յեկալ՝ յեղբայրներին  
չգտալ: Վերջը հասալ Խորասան: Գնաց մեկի տուն  
հյուր ընկալ:

— Ձեր քաղաքում դարիւր մարդուն վո՞նց են դբա-  
նում, — հարցրեց:

— Դա հեշտ բան ե, ասալ տանտերը, — մենք դա-  
րիքների ժամ ունենք: Յեթե դարիւր ունես, առավուտը  
կերթաս մի յերկու յեղ կմորթես—կեփես, հետո ժամի  
զանգերը կքաչես: Քաղաքում ինչքան դարիւր—պան-  
դուխա կա կիմանան վոր իրանց ժամում պատարազ ե,  
մատաղ կա, կթափվեն կգան: Թե քու դարիւրներին  
զտնես, — ասալ տանտերը, — այնտեղ կզանես:

Մյուս որը Արին գիշերով գնաց յոթը յեղն առալ,  
մորթել տվեց, յեփել տվեց ու առավուտը վաղ ժամի  
զանգերը քաչեց:

Չանգերի ճայնը լսելուն պես ինչքա՛ն դարիւր կար  
Խորասան՝ հալաքվիցին յեկան ժամ: Արին իրա ձեռքով  
մատաղ բաժանեց: Յեկան անցան հարյուր հազար դա-  
րիւր — յեղբայրները չկային: Վերջը՝ մատաղը հատնե-  
լու վրա եր — միջնեկ յեղբայրը յերեկաց: Տեսալ,  
կանչեց իրա մոտ, մատաղ տվեց, գինի տվեց ու հարց-  
րեց.

— Ճանաչո՞ւմ ես ով եմ յես:

— Ձե, ասալ, ի՞նչ իմանամ դու ով ես:



— Իսկ դու վճճրանդ ևս ծառայում, հարցրեց Արին յեղբորը:

— Յես, ասավ, բազմիտում. մոխիր թափող և՛ մայնակ:

Արին վերցրեց սրան ու յեկավ բազմիտի տիրոջ մոտ:

— Սրա վարձը տուր, ասավ, յես սրան ասնում և՛:

— Սա քս ի՞նչն է, վոր սրան տանում էս, — հարցրեց բողոնիսի տերը:

— Իմ յեղբայրն է, սասալ Արին:

— Դու ո՞վ ես, վոր իմ յեղբայրն էս, հարցրեց միջնեկը՝ Չարին:

— Յես Արին եմ, սասալ:

Չարին չհավատաց:

— Թե իմ յեղբայրն էս, սասալ, — դե տա տեսնեմ մենք ինչո՞ւ համար ենք դուրս յեկել մեր յերկրից:

— Հազարան Բլբուլի համար, սասալ Արին. — Արդեն բերել եմ:

— Ուր է հապա, հարցրեց Չարին:

Արին թե՛ մեր բաժանման տեղումն է, ծերունու մոտ:

Այստեղ յեղբայրները ճանաչեցին իրար: Բարետոյին, բարե առան, ինչպես կարգն է:

Արին Չարու հին չորերը հանել տվեց, դեն ածալ, նոր չորեր հագցրեց ու ճամփա ընկան:

Գնացին այսպես մեծ յեղբորն ել գտան ու յերեքով, ձիեր հեծած, յեկան հասան յերեք ճամփի գլուխը: Յեկան տեսան հարսներն այստեղ:

Արին յեղբայրներին ցույց տվեց Հազարան Բլբուլը և հետո ամեն մեկին իր նշանածը տվեց:

Բայց մեծ յեղբայրը՝ Սարին, դժգոհ մնաց:

«Տես, — սասալ ինքն իրեն, — ամենից գեղեցիկն ինքն է վերցնում, մեզ ինչ է տալիս»:

Մի քիչ հանգստացան այստեղ, հաց կերան, հետո վեր կացան, ծերունուն շնորհակալություն արին, նոր քարվան կապեցին ու — զբը՛նդ հա զբը՛նդ, զբը՛նդ հա զբը՛նդ — ճամփա ընկան դեպի իրենց յերկիրը:

Այս աշխարհում ի՞նչն է հաստատ, ի՞նչն է ու-  
 ժեղ... Սեր, ընկեր, յեղբայր — վո՞րն է հաստատ:  
 Իմաստուն ել լինես, չես կարող պատասխանել: Հաս-  
 տատն այն է, վոր այս աշխարհում վոչինչ չկա հաս-  
 տատ: Չա՞րն է ուժեղ, թե՞ բարին — իմաստուն ել  
 լինես, չես կարող պատասխանել:

Այսպես շարքով քարվան կապած գնացին յեղ-  
 բայրները: Գնացին հասան մի ծովի: Պարզ ջրերը փր-  
 փուր կապած դարկվում են ափերին: Չարկվում են ու  
 խշխշում: Խշխշում են ու հանդարտ-հանդարտ յես  
 գնում:

Չուլալ ջրեր, հոգնած մարդիկ ու շող որ:

— Յեկեք լողանանք, ասավ մեծ յեղբայրը:

— Լողանանք, ասին Չարին ու Աբին:

— Թող հարսները առաջ գնան, ասավ մեծ յեղ-  
 բայրը, — մենք լողանանք, հետո կհասնենք նրանց:

Հարսները Բլբուլն առած, քարվանի հետ առաջ  
 գնացին. յեղբայրները հանվեցին ու մտան ջուրը:

Ծովի ջուրը փրփուր կապած հանդարտ-հանդարտ  
 դարկվում էր ափերին և յեղբայրները շրփ-շրփ լողա-  
 նում էյին միասին: Մին ել մեծ յեղբայրը միջնեկին.

— Լսիր, ասավ, — արի սրան խեղդենք, ԲԼԲՈՒԼԸ  
 մենք տանենք:

— Չե, ասավ Չարին, — ինչ ել լինի մեր յեղբայրն  
 է, մեղք է: Լավ է ձեռն ու փոտը կապենք, աչքերը  
 հանենք, թող մնա:

— Այդ լավ ասիր, ասավ մեծ յեղբայրը Սարին:

Ու ջրից դուրս յեկան թե չե, յերկուսով բռնեցին  
 յեղբորը, ձեռներն ու վոտները կապեցին, դրին գետին,  
 աչքերը հանեցին, թողին այդտեղ ծովի ափին, շորերը  
 ծովն ամին ու իրանք գնացին: Գնացին հասան քարվա-  
 նին:

Հարսները տեսան յերկուսով են, հարցրին.

— Բա Արինն ո՞ւր մնաց:

— Արի՛ն... սասալ մեծ յեղբայրը տխուր.— Յե-  
րանի՛ չլողանայինք. սատանի վտարը կտարեր ջուրը  
չմանեյինք... Արին խեղդվեց ծովում:

— Ինչ ել արինք հանել չկարացինք, սասալ միջնակը  
արտում:

Հարսներն այստեղ «վա՛յ» ավին. դուրսներին ու-  
րաց յեղան: Ու ամենից ավելի էրա Արիի կինը:

Վերջը յերբ յեղբայրները մխիթարեցին նրանց,  
հանգստացան, կանգնած քարվանք նորից — զբը՛նդ հա  
զբը՛նդ — շարունակեց ճամփան:

9

Նրանք դեռ ճանապարհի կիսին ելին՝ լուրը հասալ  
Թաղավորին, թե վորդիներդ գալիս են ու բերում են  
Բլբուլը Հազարան:

Թաղավորը, ինչպես կարգն է, իր մեծամեծներով,  
զինավառ դորքով ու մեծ թողովրդով գնաց առաջ:

Յերկու կողմից զբնդոցով, շխչխկոցով յեկան  
հանդիպեցին իրար: Պատիվ ավին, սլատիվ առան ու  
հանդեսով, յերգով, կանչով մտան քաղաք:

Գաղաքումն էլ մարդ չմնաց, հարյուր սարվա ծե-  
րերն էլ վտաքի յելան Հազարան Բլբուլը տեսնելու:  
Կուռը, փողոց լցվեց մարդով, և բոլորը ծափ զարկե-  
ցին ու կանչեցին.

— Կեցցե՛ քաջն Սարին:

— Կեցցե՛ քաջն Չարին:

— Կեցցե՛ Բլբուլը Հազարան:

Այսպես յերգով, կանչով զորք ու թողովուրդ, ինչ-  
պես վարար մի գետ, գնացին տաճար: Բլբուլն իր  
զանդակով դրին սեղանին:

Այստեղ միայն թաղալորը հարցրեց վորդինեբին,  
թե հապա ս՞ըր ե Արին:

— Նա ծովում խեղդվեց, հայրիկ, ասին յեղբայր-  
ները ակուր:

— Իսկ այս յերեք աղջիկն ո՞վ են, հարցրեց թա-  
ղալորը նորից:

— Այս մեկը, պատասխանեց մեծ յեղբայրը՝ Խա-  
րին, — իմ նշանածն է, այն մյուսը՝ միջնեկ յեղբորս,  
իսկ սա յեկ, ցույց տվեց Արիի կնկան, աղախին է քեզ  
համար...

— Սո՛ւտ է, ասավ փոքր հարսը թաղալորին:

Թաղալորն այստեղ մատը կծեց:

— Իսկ Հազարան Բլբուլը ձեզանից վո՞րը գտավ:

— Յե՛ս, ասավ մեծը:

— Յե՛ս, վրա բերեց միջնեկը:

Թաղալորը նորից մատը կծեց:

— Ինչպես տեսնում եմ, ասավ, ձեր մեջ վեճ կա:  
Դե միենույնն է, ասավ, ով բերել է, թող նա յեկ խո-  
սեցնի բլբուլը:

— Յե՛ս, առաջ յեկավ մեծը՝ Խարին:

— Դե խոսեցրու, — ասավ թաղալորը, — խոսեց-  
րու, թող յոթը տարվան մեր չոր այդին կանաչի:

Խարին բարձրացավ սեղան:

Չորք ու ժողովուրդ այստեղ նորից իրար անցան,  
ծափ զարկեցին ու կանչեցին.

— Կեցցե՛ Խարին, կեցցե՛ Խարին... .

— Կեցցե՛ Բլբուլը Հազարան... .

Խարին մտեցավ բլբուլին, դուռնի տվեց, ինչպես  
կարգն է, ու ասավ.

— Բլբուլ, խոսիր, թող մեր այդին կանաչի:

Բլբուլը դուռնի թափ տվեց ակուր ու ձայն չհա-  
նեց:

Առաջ յեկավ միջնեկ վորդին:

— Տեսա՛ր, հայրիկ, ասավ, տեսա՛ր, վոր յես եմ  
բերել:

— Դե խոսեցրու, սասալ հայրը, խոսեցրու թող յո-  
թր տարվան մեր չոր այգին կանաչի:

Յեւ Չարին բարձրացաւ սեղան:

Չորք ու ժողովուրդ էլի իրար անցան, ծափ զար-  
կեցին ու կանչեցին.

— Կեցցե՛ Չարին, կեցցե՛ Չարին:

— Կեցցե Բլբուլը Հաղարան:

Չարին մոտեցաւ բլբուլին, գլուխ ամեց, ինչպես  
կանգն է, ու սասալ.

— Բլբուլ, խոսիր, թող մեր այգին կանաչի:

Բլբուլն էլի տխուր թափ ամեց գլուխը ու ձայն  
չհանեց:

- Ծափ ու ծիծաղ ընդհատվեց:

Բոլորն ընկան մտքերի մեջ:

Այգին չոր էր, չոր էլ մնաց:

Իսկ բլբուլը հարվում, մաշվում էր փանդակում,  
և նրա զմբուխս ու լայ փետուրները թափվում էյին  
որեցոր...

Սրանք թող մնան այստեղ, մենք լուր տանք փոքր  
յեղբորից:

## 10

Այն ծովը, ուր յեղբայրները լողացան, ուր պարզ  
ջրերը փրփուր կապած զարկվում էյին ափերին, այն  
ծովի վրայով ճերմակ համքերի մի յերամ էր անցնում:  
Մի պառավ մայր էր իր ձագերի հետ: Ծարան կապած,  
ծովի յերեսն ընկած զնում էյին նրանք հեռու: Գնում  
էյին, թեվին անում ու կզգում:

Գնացին այսպես հեռո՛ւ, հեռո՛ւ, ու յերբ հասան  
ժայրը ծովի՝ ձագերը ճչացին հանկարծ:

— Վա՛յ, մայրիկ, սաին, այս ո՞վ է ընկած այս-  
տեղ:

Պառաւ ժայրը, վոր շատ յերկիրներ եր տեսել ու  
շատ մարդ եր ճանաչում,

— Թագաւորի փոքր տղան է, ասալ:

— Բա ինչո՞ւ յե այտեղ ընկել—մնացել:

Պառաւ ժայրը, վոր իմաստուն եր և ամեն ինչ գի-  
տեր,

— Յեղբայրները, ասալ,— դրա ձեռն ու վտար  
կապել են, աչքերը հանել ու թողել:

— Վայ խեղճ տղա՛, խեղճ տղա՛,— կղղայցին  
ձուպերը մխասին.— Բա վո՞նց պիտի սա լավանա...

— Դա հեշտ բան է, ասալ ժայրը,— յես իմ թե-  
վից մի փետուր կբցեմ, աչքերն ել իր կողքին են, թող  
տեղը դնի ու փետուրը քսի աչքերին:

— Իսկ թոկերը վո՞նց անի, մայրիկ:

— Այն ել դուք գնացեք կտցով պոկեցեք:

Չաղերը Կողմացին աղին, ցած իջան և կտուցներով  
սկսեցին քանդել—պոկել նրա ձեռներն ու վտաները կաշ-  
կանդող թոկերը:

Յերբ ձեռներն ազատեցին կապից—կապանքից,  
Արին ձեռը տարավ աչքերը դտավ, տեղը դրեց ու  
թուշունի փետուրը քսեց: Ինչպէս քնից զարթնես՝ աչ-  
քերը բաց արալ ու լույս աշխարհը տեսալ: Վեր կա-  
ցալ, ուղեց թուշունիներին շորհակալութուն հայտնել,  
բայց նրանք ձերմակ յերամ կապած, ծովի վրիւտը  
լանջով գնում եյին նորից...

Ու այտեղից վեր կացալ Արին և մերկ ու մենակ  
գնաց իր հոր քաղաքը: Վորովհետեւ տկլոր եր, ամօթից  
չուղեց գնալ պայտտ:

«Լավ է, ասալ, ծառա մտնեմ մի տեղ, վրաս գըլ-  
խն չոր անեմ, նոր գնամ»:

Ու գնաց մի հայթուխի մոտ:

— Բարի աջոգում, վարպետ, ասալ, ծառա չե՞ք  
վերցնի:

— Ինչու չե, ասալ, ինձ հենց ջուր կրող ու փայտ  
ջարդող և հարկավոր:

Ու խոսեցին, պայժան կապեցին, և Արին յեղով  
հացթուխի ծառա: Զուր եր բերում, վաճա եր Զար-  
գում, փուռ եր վառում և հացուփոր ապրում:

Անցավ այսպես մի ամիս: Մի ուր ել հանկարծ քա-  
ղաքի մարդիկ իրար գլխով գիպան և քաղաքը լցվեց  
ձիչ ու լացով: Մարդիկ փախչում, պահվում եյին ամեն  
կողմ:

— Այս ի՞նչ բան ե, վարպետ, ասավ Արին:

— Այ վա՛յ գլխիդ,— ասավ տերը,— ուղտի ախան-  
ջումը քնած ես, ինչ ե, վոր չես լսել: Սիպտակ թա-  
ղավորը հրե, իր բոլոր գեղերին հավաքել յեկել ե մեր  
քաղաքը պատել:

— Ինչո՞ւ համար, ասավ, վարպետ:

— Ինչո՞ւ համար... քու գնչի համար, հիմար...  
Թաղավորի տղերը գնացել են նրա Հաղարան Բլբուլը  
բերել, նա ել յեկել հիմա բլբուլ բերողին և ուզում:

— Հա՞... դե վոր այդպես և, վարպետ, աս-  
ավ,— արի գնա թաղավորի լավ ձիերից մինը իրն-  
դրի, գնամ պատասխան տամ...

Վարպետը ծիծաղեց:

— Այ վա՛յ գլխիդ,— ասավ,— Սիպտակ թաղա-  
վորին պատասխան տվողիս տեսեք: Պատասխան՝ թա-  
ղավորի տղերը կարո՞ղ են նրան պատասխան տալ.  
դու ո՞վ ես վոր, տղիք հիմար:

Ասավ վարպետն ու գուրս գնաց: Նրա հետեյից ել  
Արին:

Գնաց տեսավ թաղավորի մեծ տղան, իր մեծ  
յեղբայրը՝ Խարին, ձի նստած գնում և զեղլին պատաս-  
խան տալու:

— Այդ ո՞ւր, թաղավորի տղա, ասավ Արին:

— Հեռո՞ւ, ասավ, տղիք հիմար. չես տեսնում  
Սիպտակ թաղավորն յեկել՝ Հաղարան Բլբուլ բերողին  
և ուզում...

Ասավ, մարտիրո՞վ զարկեց Արուն ու ձին քեց-գնաց:

Գնաց քաղաքից դուրս յեկամ: Դուրս յեկամ ու ի՛նչ տեսամ: Ամբողջ դաշտը ճերմակել է Սիւրտակ թաղամորի սիպտակ վրաններից սիպտակ դորքերից ու սիպտակ ձիերից: Ու ամեն կողմ սղոժուկ—դեմքերի քրքիջ, ձիերի խրխինջ:

Այդ վոր տեսամ ա՛հ կալամ սիրտը, թեքեց խկուռն ձիու գլուխը ու նորից յեռ յեկամ քաղաք, ձին թողեց վոր գնա սալսառ, իսկ ինքը պահվեց անհայտ մի տեղ:

— Վա՛յ, կորամ մեր կարին, —ասավ թաղամորը, տեսնելով նրա անտեր ձին:— Դե, Չարի, հերթը քոնն է հիմի Սիպտակ թաղամորին պատասխան տալու: Դու յեռ բերել Բլբուլը Հաղարան, դու յեկ կաճող ես պատասխան տալ նրան...

Չարին իսկույն պահ հողամ, գենքեր առավ ու ձի հեծավ:

Ճամփին Արին մոտեցավ ելի:

— Այդ ո՞ւր, թաղամորի տղա, — ասավ:

— Հեռո՛ւ, հիմար անասուն: Չե՞ս խմացել, վոր Սիպտակ թաղամորը Հաղարան Բլբուլ բերողին է ուղում: Գնում եմ պատասխան տամ: Հեռո՛ւ...

Ասավ, քաչեց մտրակը նրա թիկունքովը մեկ ու ձին քչեց—գնաց:

Գնաց դաշտը դուրս յեկամ, դուրս յեկամ ու ի՛նչ տեսամ:—Ամբողջ դաշտը ճերմակել է ձյունի պես Սիպտակ թաղամորի սիպտակ վրաններից, սիպտակ դորքերից ու սիպտակ ձիերից: Ու ամեն կողմ խոտոց ու սղոժուկ — դեմքերի քրքիջ, ձիերի խրխինջ:

Ահից—յերկյուղից կապ ընկավ լեզուն, ձիու գլուխը թեքեց իսկույն ու նորից յեռ յեկամ քաղաք. ձին թողեց գնա սալսառ, իսկ ինքն ամոթից պահվեց մի տեղ:

Մինչ այդ Սիպտակ թաղամորն սողանց տեսավ

Տարդ չի յերկում, նորից ուղարկեց մի նոր հրաման.

«Ահրջին անգամ ու կարական պահանջում եմ մի ժամվա մեջ տալ ինձ իմ բլրուլը բերողին: Հակառակին՝ շունչ չեմ թողնի այս յերկրում, քար չեմ թողնի քարի վրա»:

Սուդ ու շիվանն ընկավ քաղաք: Նորից վախ ու վախ: Նորից վախուստ ու պահուստ:

— Վա՛յ, մենք կորանք:

— Վա՛յ, մենք մեռանք:

— Թո՛ղ չքանար այդ բլրուլը:

— Չքվեք, կորչեք այդ բլրուլը:

Այդ ժամանակ Արին փոխ համար փայտ էր ջարդում, ու ջարդի ձայնից բան չէր լսում, բայց մեկ ել տեսավ վարպետը յեկավ վաղեվադ և ուզում է փոռոթ մանի: Արին այտեղ ծիծաղեց:

— Ի՞նչ ես անում, վարպետ, ասավ:

— Չայնդ կտրի, շաշ մասխարա, ասավ վարպետն ահարեկ, — Սիպտակ թաղավորը զարու յե հիմի, քարը քարին չպիտի թողնի: Դու այտեղ նստել փայտ ես ջարդում...

— Սիպտակ թաղավորը՝... Բա թաղավորի տղերքը պատասխան չովի՞ն:

— Ի՞նչ պատասխան, ի՞նչ բան, հիմար, գլխիդ ճարք տես, հիմա...

— Այդ չեղավ, վարպետ, ասավ Արին. — Արի գնա թաղավորին ասա մի ձի տա — գնամ պատասխան ասմ:

— Գնա՛, կորի, հիմար, — ասավ վարպետը վախ միջից, — թաղավորի տղեքը չկարացին բան ասել, դու պիտի պատասխան ասա:

Այդ ժամանակ սուդ ու շիվանը քաղաքում ել տվելի մեծացավ: Մարդիկ իրար տրտրելով փախչում էին և անիծում Հազարան Բլրուլին ել, նրա բերողին ել:

Այդ վոր լսեց Արին, եւ չհամբերեց, մերկ ու տիկոր գնաց ուղից թազավորի մտա:

Գնաց գլուխ տվեց, ինչպես կարգն է, ու կանգնեց:

— Թազավորն ապրած կենա, ասալ, հրամանք արեք ինձ մի ձի տան — գնամ Սիպտակ թազավորին պատասխան տամ:

Օեր թազավորը չճանաչեց իր աղին:

— Դե, վորդի, ասալ, յես հույս չունեմ, թե մի բան անես, բայց գնա դամը, վոր ձին կուզես ընտրի ու, թե կարաս Սիպտակ թազավորին պատասխան տուր:

— Բայց, թազավորն ապրած կենա, ասալ Արին, յես մի պայման եմ գնում:

— Ասա՛:

— Յեթե յես, ասալ Արին, Սիպտակ թազավորին պատասխան տվի ու նա թողեց գնաց առանց մեր քաղաքը մնասելու, յերեք որ թազավորութունդ ինձ տուր, վոր ի՛նչ ուզեմ անեմ, վոր ի՛նչ դատեմ, դատեմ:

Թազավորն ստորագրութուն տվեց, Արին պայմանն առալ ծոցը դրեց, նետ ու աղեղը վերցրեց, ձին հեծալ ու գնաց:

Գնաց ուղից Սիպտակ թազավորի մտա:

Գնաց տեսալ նրա բանակում մեծ կեր ու խում — դեվերի զբբիջ, ձիերի խրխինջ:

— Ո՞ւր է թազավորն, ասալ:

— Հրե՛ իրա սիպտակ վրանում:

Քչեց գնաց սիպտակ վրան: Ներս մտալ ու, ամենց գլուխ տալու, կանդնեց Սիպտակ թազավորի առաջ:

Սիպտակ թազավորը բարկացալ այտուղ:

— Ինչո՞ւ, ասալ, ինձ գլուխ չես խոնարհում:

— Յես գլուխ խոնարհել չդիտեմ, ասալ Արին:

— Դե, լալ, ասալ դայրացած: — Դո՞ւ յես ինչ թազավորի փոքր տղան:

— Յե՛ս եմ :

— Դո՞ւ յես բերել իմ Բլբուլը Հազարան :

— Յես եմ բերել :

— Պատմիր տեսնեմ ի՛նչպես բերիր :

Արին պատմեց՝ այսպես, այսպես... Պատմեց ինչ յեղել եր, պատմեց այն բուրբը, ինչ յես պատմեցի ձեզ :

— Դե ինչպես բերել ես, ասով բարկացած, — աչսպես ել գնա յես բեր քու ձեռքով : Թե չես հոգ ու մոխիր կշինեմ ձեզ :

Արին ծիծաղեց :

— Հա՛-Հա՛-Հա՛... Վսնց թե յես բեր, ասով, — յես չեմ տա յես Բլբուլը Հազարյան : Կուխի կուպեա, կուխի անենք :

Թազավորները ծիծաղ չին սիրում :

Այդ ծիծաղի՛ց մռնչաց Սիպտակ թազավորը, բերեից ծուխ ու կրակ արձակեց, ուղեց բերնի հուրքով վառել նրան, բայց Արին նետը գրեց աղեղին : Լարեց աղեղն ու թողեց :

— Վը՛ղղ, — անցավ նետը :


Սիպտակ թազավորը դուռաց ահուկի ու թափուրժեց իր վրանում :

Նրա ձայնից իրար անցան բուրբ դեմերը՝ մեծ ու փոքր, և վո՛րը վոտավ, վո՛րը ձիով փախուտտ ավին ու գնացին :

Գնացին նորից Չոր-Չորստան, Անդ-Անադաս, ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թռչում :

Լուրը բերին թազավորին : Թազավորը նորից յերգեցիկ խմբով, զինավառ զորքով ու մեծ ժողովքով գնաց առաջ :

Յեկան յերկու կողմից հանդիպեցին իրար, պատիվ ավին, պատիվ առան : Փող հնչեցին, ծափ գոթ կեցին ու կանչեցին :



— Կեցցե՛, կեցցե՛...

— Կեցցե՛ մեր զաջը...

Արին այստեղ մտեցա՛յ հորը:

— Ինձ ճանաչո՞ւմ ես, հայրիկ, հարցրեց:

— Չե՛, ասա՛յ, Թաղա՛վորը, չեմ ճանաչում:

— Յես զու Արին եմ, ասա՛յ տղան:

Թաղա՛վորը չհավատաց:

— Դե փոր դու իմ փորդին ես, ասա՛յ, արի հա-

զարան Բլբուլին խոսեցրու, վար մեր չոր ալգին կանաչի նորից:

Չորք ու ժողովուրդ նորից գնացին տաճար:

Սառը տաճարում, վանդակի մեջ, բլբուլը նայում էր մաշված ու խեղճ:

Յեկավ Արին, սեղան յեւով, կանգնեց Բլբուլի առաջ, գլուխ ավեց, ինչպէս կարգն է, հետո հանեց նրան վանդակից, թողեց աղաս ու ասով:

— Բլբուլ ջան, խոսիր, թող յոթը տարվա մեր չոր ալգին կանաչի:

Ասով—չասով, խոսքի կեսը գեռ բերանում, վանդակից աղատված բլբուլն ուրախ թեմին ավեց ու յերդեց:

Այդ յերդէն էր — մին էլ տեսան չոր ալգին հաղավ գմբուխա կանաչ. ծաղկեցին թաւի ու ծառ, ծաղիկները բացվեցին, սղը լցվեց հաղար. ձայնով, հողար ձեւով յերդեցին թուշունները վազուց լսած, և նրանց ձայնի վրա հողի միջից, քարը տակից գլուխները հանեցին նոր ծիւր ու ծաղիկներ, և ցամաք սղբուրը գրնդաց...

Այստեղ միայն թաղավորը տեսավ, վար դա իր վորդին և և ուրախացավ աշխարհովը մին, ու նրա հետ ամբողջ ժողովուրդը:

Այդ ժամանակ Արին ասով.

— Դե, հայրիկ, իշխանությունն իմն է յերեք որ:

— Քոնն է, ասով հայրը, և թո՛ղ լինի հովիտյան:

Նստեց Արին հոր տեղը ու յեղբայրներին կանչեց դատի: Յեկան նրանք՝ Ուարին, Չարին, ու ինդրեցին փոքր յեղբորից ներող լինի իրենց արածի համար:

— Հիմա յես սրանց ի՞նչ պատիժ տամ, հարցրեց Արին հորից:

— Ինչ վոր գիտես, վորդի, պատասխանեց հայրը ծեբ, — իշխանությունը քոնն է հիմի:

— Դե, քանի վոր, — ասով Արին յեղբայրներին, — դուք ինձ չսպանեցիք, յես էլ ձեզ չեմ սպանի:

Խնդրում եմ միայն ամեն մեկդ ձեր կնիկը վերցնեք ու հեռանաք մեր յերկրից, և քանի յես կամ — ե՛լ իրավունք չունենաք այս հողը դալու:

Ասավ, յեղբայրները — Սարին, Չարին — սեփերես ու ամոթով թողին իրենց տունը հայրական, թողին իրենց յերկիրը, առան իրենց կանանց ու զնացին ստար, հեռու յերկրներ:


Իսկ ինքը — Աբին տեր դարձավ հոր աշխարհին, և նրա այգին, վոր միշտ փակ էր ժողովրդի համար, — բաց արավ ամենքի առաջ: Կանչեց բոլորին, և դրանց հետ բոլոր աղքատներին:

— Իսկ, ասավ, գուրկ եք յեղել այս այգուց, ձերն ե, ասավ, այսուհետ... Ձերն են աղբյուրը, ծաղիկ, թուփ ու ծառ ու պտուղները բոլոր... Թող չլինի ել պտուղ խնդրող մուրացիկ ու մուրացիկ անեծք...

Ասավ ու ժողովուրդն այդ որվանից ամեն ոք ուրախ-ծիծաղ պտավում էր հով ծառերի մեջ, մախմուր կանաչներում, ծիծաղաձայն շատրվանների և զով աղբյուրների մոտ ու քաղում, վայելում էր պտուղներն անմահական... Իսկ Հողարան Բլբուն այնտեղ — այգում — յերգ էր ատում աւալսարից մինչ իրիկուն...

1923

Յերիվան



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220035306